ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
**ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

24.12.24 № 29/22.1/38628-24
Ձեր N

«ԱԼՖԱ-ՖԱՐՄ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆ ՄԻՔԱՅԵԼ ՄԱՑԱԿՅԱՆԻՆ

«ՌԻԹՄ ՖԱՐՄ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆ ՀՈՎԻԿ ՄԵՍՐՈՊՅԱՆԻՆ

«ԳԵԴԵՈՆ ՌԻԽՏԵՐ ԴԵՂԱՏՈՒՆ ՀՁ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆ Ա.ԱՂՎԱՆՅԱՆԻՆ

«ԷՍ-ՖԱՐՄԱ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆ Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

«ՆԱՏԱԼԻ ՖԱՐՄ ԴԵՂԱՏՈՒՆ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆ ԱՐՄԱՆ ԱՍԱՏՐՅԱՆԻՆ

«ՖԱՐՄԴՈՄ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆ ՎԱՀՐԱՄ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ

«ՏՈՆՈՒՍ-ԼԵՍ ՌԵՄԵԴԻ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆ ԼԻԱՆԱ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻՆ

«ԼԱՌԱՖԱՐՄ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆ ԱՐԱՄ ԱՂՎԱՆՅԱՆԻՆ

«ԱՌԻԱԼ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆ ԱՐԱՄ ԱՂՎԱՆՅԱՆԻՆ

«ԱՎՐՈՐԱՖԱՐՄ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆ ԱՐԱՄ ԱՂՎԱՆՅԱՆԻՆ

Առողջապահության Նախարարություն
Ministry of Health of the Republic of Armenia
Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, 0010, Հանրապետության հր., Կառավարական տուն 3
Հեռ.՝ (+ 374 60) 80 80 03 էլ. փոստ՝ info@moh.am

«ԿԱՌԵ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆ ԱՐԱՄ ԱՂՎԱՆՅԱՆԻՆ

«ԱՌՆԻԿԱ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆ ԱՇՈՏ ՄԻՔԱԵԼՅԱՆԻՆ

«ԿՈՒՌԱՄՈՒՍ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆ ՀԵՂԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Ի կատարումն ՀՀ Վարչապետին 23.12.2024 թվականի
թիվ 02/11.7/44210-2024 հանձնարարականի
և ի պատասխան Ձեր 21.11.2024 թվականի գրության,

Հարգելի գործընկերներ,

Հայտնում եմ հետևյալը.

Առողջապահության համակարգի արդյունավետ կառավարման և հետագա զարգացման համար կարևոր նախապայման է ժամանակակից էլեկտրոնային առողջապահության համակարգի առկայությունը, որը հնարավորություն է ընձեռել արդյունավետ իրականացնել բնակչության առողջապահական տվյալների մուտքագրումը, մշակումը, պահպանումը, արխիվացումը և օգտագործումն էլեկտրոնային միջավայրում: Էլեկտրոնային առողջապահության համակարգը (https://www.armed.am ), ապահովելով պացիենտի առողջապահական տվյալները մեկ գրառման մեջ հավաքագրելը, հնարավորություն է ստեղծում բարձրացնելու առողջապահական ծառայությունների մատուցման որակը: 2022 թվականին պիլոտային կարգով և փուլային եղանակով ներդրվել է էլեկտրոնային դեղատոմսերով պետության կողմից ձեռք բերված և մարդասիրական օգնությամբ ստացված դեղերի էլեկտրոնային դուրս գրումն, որի շրջանակներում վերապատրաստում են անցել բոլոր շահագրգիռ կողմերը (բժիշկ, բուժքույր, դեղագործ և դեղագետ): Էլեկտրոնային դեղատոմսերի ներդրման նպատակն է՝ բարձրացնել բժշկական օգնության և սպասարկման որակը, ելնելով հանրային առողջության և անվտանգության խնդիրներից, հաշվի առնելով, որ բժիշկները դեղատոմս գրելով ապահովում են պացիենտի կողմից նշանակված դեղերի ճշգրիտ և կանոնակարգված կիրառումը, բուժման արդյունավետության բարձրացումը,

բուժման ընթացքի վերահսկելիությունը, պացիենտների հետ հետևողական և շարունակական աշխատանքի ապահովումը:

Մարտի 01-ից համակարգի ամբողջական գործարկման ժամանակ եղել են ծանրաբեռնվածություն, բայց խափանում չի եղել, քանի որ դեղատների կողմից եղել են աշխատակիցների գրանցման ավելացումներ, այդ ժամանակ Արմեդ ազգային օպերատորը աշխատել է 24/7 ռեժիմով և մի քանի օրվա ընթացքում ավարտել են բոլոր նոր բաժանորդների գրանցման գործընթացը: Ինչպես նաև ավելացվել են նոր ֆունկցիոնալություններ, ավելի դյուրինացնելու բժշկի և դեղատան աշխատակցի աշխատանքը, դրանք են՝ հեռախոսի միջոցով բժիշկը կարող դուրս գրել դեղատոմս, ինչպես ամբուլատոր, այնպես էլ տնային այցի ժամանակ, իսկ դեղատան աշխատակիցը՝ բաց թողնել դեղատոմս, սա այն դեպքերում, եթե դեղատանը առկա չէ համակարգիչ, կամ համացանցի կամ հոսանքի հետ առկա են խնդիրներ: Հաշվի առնելով, որ 70-80% շահառուները քրոնիկ պացիենտներ են և նրանց մեծ մասը ստանում են ամեն անգամ նույն դեղերը, էլեկտրոնային դեղատոմսերի դուրս գրմամբ, մի քանի հպումով բժիշկները դուրս են գրում նախորդ ամսվա դեղերը, ինչը բերում է ժամանակի խնայողությանը: Այն դեպքում, երբ բուժառուն չի ցանկանում հայտնել իր ՀԾՀ կամ անուն ազգանուն, հայտնում է միայն կոդ, որը հասանելի է հավելվածի միջոցով, չունենալով հավելված բժիշկը կարող է թելադրել բուժառուին դուրս գրումից հետո:

Նշեմ, որ այս պահին համակարգին միացված են թվով 2254 դեղատուն, իրենց 2717 դեղագետ աշխատակիցներով:Ինչպես նաև համակարգին միացած են թվով 14181 բժիշկ, հավաստագիր ստացածների թիվը 16100 է, որը ընդհանուր հավաստագիր ստացած բժիշկների 88%-ն է, այս թվի մեջ ներառված են բժիշկներ, որոնք որևիցե տեղ չեն աշխատում կամ չեն աշխատում որպես բժիշկ:

01 մարտից–01 դեկտեմբեր դուրս է գրվել 1 042 495 դեղատոմս պետական պատվերի շրջանակներում և դեղատների կողմից բաց է թողնվել 969 514 դեղատոմս, ինչը կազմում է 93%, նշեմ որ տվյալ դեղատոմսերը նույնպես սպասարկվում են դեղատների կողմից, համաձայն դեղերի ձեռք բերման պայմանագրերի, քանի որ առաջնային օղակը ինքն է կազմակերպում դեղերի ձեռք բերում:

Նույն ժամանակահատվածում դուրս է գրվել 97377 հիվանդի միջոցով գնվող դեղատոմս (հակաբիոտիկներ, հորմոններ, հակասնկային և այլն), սակայն բաց է

թողնվել 30360 դեղատոմս, որը կազմում է 31 %, 67017 դեղատոմս մնում է չսպասարկված, որը անհասկանալի է: Հավելեմ, որ անկախ քանակից Արմեդ համակարգին միանալը, բաժանորդներ գրանցելը, դեղատոմսով աշխատելը, ծրագրի սպասարկումը ամբողջովին անվճար և որևիցե գումար չի գանձել և չի գանձվում:

Արմեդ ազգային օպերատորը պարբերաբար թարմացնում է իր սերվերային կարողությունները, միայն 2024 թվականին կատարել է երկու ձեռք բերում, առաջինը մայիսին 469 300 000 դրամ, այդ սարքավորումների տեղադրումը ամբողջովին ավարտվել է հուլիս ամսին, և սեպտեմբեր-հոկտեմբեր լրացուցիչ 365 500 000 դրամի, որի ամբողջովին տեղադրումը կավարտվի 2025 թ. փետրվարին:

Միաժամանակ, նշեմ որ ՀՀ առողջապահության նախարարության կողմից տաբեր հանդիպումների ժամանակ մշտապես նշվում է դեղատոմսով աշխատելու կարևորությունը և պահանջվում բժշկական կազմակերպությունների ղեկավարներից հետևողականություն՝ բժիշկների աշխատանքին: Խորհրդատվական թերթիկների կամ այլ փաստաթղթերի վրա դեղեր գրելու և հստակ դեղատուն ուղղորդելու, ինչպես նաև առանց էլեկտրոնային դեղատոմս դուրսգրելու դեպքերի վերաբերյալ առաջարկվել է այդ դեպքերը ներկայացնել ՀՀ առողջապահության նախարարություն կամ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին հետագա ընթացք տալու նպատակով:

Հարկ է նշել, որ առանց դեղատոմսի դեղի վաճառքի պատճառներից մեկը նաև ինքնաբուժությունն է, երբ քաղաքացին չի դիմում որևիցե բուժհաստատություն, այլ իր ծանոթների կամ դեղատան աշխատակցի խորհուրդներով ձեռք է բերում դեղեր:

Ինչ վերաբերվում է այն դեղերին, որոնց գրանցման ժամկետը ՀՀ տարածքում լրացել է, ապա նման դեղերի համար էլեկտրոնային դեղատոմս դուրս գրել այսուհետ հնարավոր է գրանցման ժամկետի ավարտից հետո ևս 2 տարի հաշվի առնելով, որ նույն դեղերը կարող են մի քանի ամիս հետո նորից գրանցվել ՀՀ-ում, այս առաջարկը ստացել ենք դեղատնային գործունեություն իրականացնող ընկերությունից: Արմեդ համակարգում դեղերի մուտքագրումը իրականացվում է «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված ցանկի համաձայն:

Տեղեկացնում եմ, որ նախքան էլեկտրոնային դեղատոմսի ներդրումը բուժաշխատողների իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով,

Առողջապահության նախարարությունը կազմակերպել է հանդիպումներ, որի ընթացքում մանրամասն արծարծվել են խնդիրները և մտահոգությունները՝ կապված էլեկտրոնային համակարգում գրանցման և էլեկտրոնային դեղատոմսերի գրման հետ: Բացի այդ, պարբերաբար, այդ թվում ներդրումից հետո կազմակերպվել են հանդիպումներ՝ առցանց տարբերակով: Տրվել են խորհրդատվություններ՝ հեռախոսազանգերի միջոցով: Առողջապահության նախարարության կողմից իրականացվել է էլեկտրոնային դեղատոմսերի վերաբերյալ հանրային լայն իրազեկում՝ տարեսկզբից շուրջ 50 լուսաբանում է կազմակերպվել, այդ թվում ասուլիս, անիմացիա և ինֆոգրաֆիկաներ, հարցազրույցներ, մամուլի հաղորդագրություններ, որոնք տեղադրվել են առողջապահության նախարարության պաշտոնական կայքէջում և սոցիալական հարթակներում, տարածվել ԶԼՄ-ներով: Ծրագրի մեկնարկին զուգընթաց, սոցիալական ցանցերում իրականացված մոնիտորինգի արդյունքում «Հաճախ հնչող հարցերն» առանձնացվել են:

Տեղեկացնում եմ, որ 2025 թվականի հունվարից դեղատոմսով դուրս գրվող դեղերի ցանկը չընդլայնելու և հետաձգելու վերաբերյալ նշեմ, որ այդ ցանկում առկա չեն հոգեմետ նյութեր պարունակող դեղեր, որոնց էլեկտրոնային դեղատոմսով դուրսգրումը և բացթողնումը պլանավորվում էր իրականացնել 2025 թվականից, իսկ այլ խմբերի ավելացումը պայմանավորված էր նաև ապահովագրության փուլային ներդրման հետ, որտեղ որպես քրոնիկ հիվանդների դեղապահովման ցանկում առկա էին դեղեր, որոնք պետք է ավելացվեին 2025 թվականի հունվարից:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ՎԱՐԴԱՆՈՒՇ ԳՐԻԳՈՐՅԱՆ

12/24/2024

X

ՌՈՒԲԵՆԻ ՎԱՐԴԱՆՈՒՇ

Signed by: GRIGORYAN VARDANUSH 6802780100

Կատարող՝ Անահիտ Մկրտչյան
դեղորայքային քաղաքականության
և բժշկական տեխնոլոգիաների վարչություն
հեռախոս 060-80-80-03 /1411/